

բառի հեղինակը և “Արդա ողբով” Արդա ձըշմարիս քարգապետութիւնը հասկանալ աշխատել եղայրատեցութիւն չեւ:

Խչ վերաբերում է Հանդէս ամսօրեայթիւնի ապրիլ հ.-ում (Եր. 123) արած բացազնութիւններին՝ դէմք նման բացազնութիւններ դնել համապատասխան չեւ մեր ձաշակին և ախորժակին:

Կ. Վ.



## ԵԿԵՂԵՑՅՈՒՆ ՔՐՈՆԻԿԱՆ

Ա Մ Ս Ո Ր Ե Բ Տ Տ Ե Ս Տ Ե Ս Ո Ւ Խ Ի Ւ Ն .

Ա. Յարութեան մեծապահառ տօնն այս տարի բոլոր քրիստոնեայ աշխարհը միասին կատարեց. այդպիսի զուգագիպութիւն յաճախ չեւ հանգիպում: Երեք այս զուգագիպութիւնն ևս ժամանակի նշաններից մէկն է, որոնցով այնպան հարուստ է մեր գարավիքը: Քրիստոնէական եկեղեցու ընդհանուր գատմանմեան մէջ մեր ժամանակը նշանաւոր է այնու, որ օրէ ցօր աւելի յաճախ են հիշում մի ու թիւն և զրայ ը ու թիւն անունները: Քրիստոնէական եկեղեցիների միութեան խնդիրը մեր ժամանակի օրակարգի խնդիրներիցն է համարուստ: Թէպէտ և սիսալ ընթանողակի աւրիշներին ի միութիւն հրաւիրող եկեղեցիք մի ու թիւնը հապատակութիւն են հասկանում և փոխանակ հոգեւոր միութեան, ձևական միութիւն են պահանջում: 2Ենք կարող անտես անել և խսկական միութեան նշանները: որոնց յաճախումը միայն յօյս կարող է տալ մեզ, որ ապագային քրիստոնեայք աւելի հոգեւոր միութեան պիտի կշռ տան, քան թէ արտաքին: Մեր ժամանակի քրիստոնէից հոգեւոր միութեան գեղեցիկ ապացոյներից մէկն էլ և գլխաւորն այն սէրն է, որ ցոյց տուին բոյոր աշխարհիս քրիստոնեայ դաւանութիւնները թշուառ և հալածուած հայ քրիստոնէից: Այս Յարութեան մոնինին Ամերիկայի բողոքական եկեղեցիներից մինչեւ Հռոմը ուր իշխում է դաւանական բանկութեամբ առաջարկութեամբ, ամենու մէջ առաջարկութեամբ առաջարկութեամբ և առաջարկութեամբ առաջարկութեամբ:

ԿԱԹՈԼԻԿՆ ԾԿԸՆԾՅԻ

— Ինչպէս „Annales Catholiques“ թէրթն հաղորդում է, վերջերս պապի և ոռւսաց կառավարութեան յարաբերութիւնները շատ լաւացել են. Աատիկանի ոռւսական գեսպանը պ. Իզզուլիկին պապին է մատուցել Կայսերական մի նամակ, որի մէջ առկան եղած խնդիրների բարեգը լուծումն է խոստացուած: այդ խնդիրներն են կամուլիկ հոգեւոր գարութեան և պապի ու Ռուսաստանի կամուլիկ եպիսկոպոսների յարաբերութեանց խընդիրը:

— Քրանսիացի կրօնաւոր հ. Շարմէտան: որ արևելից գարունների գործոց ընդհանուր տեսուչն է, պապի քարտուղար ծիրանաւոր Ռամզուլայից մի նամակ է ստացել: որի մէջ ծիրանաւոր պապի օրհնութեան է յայտնում հ. Շարմէտանին յօգուտ հայոց սկսած հանդանակութեան համար: Ահա այդ հետաքրքրական նամակը:

«Եթ ապատ առ ու եւ լի հայր,

Զեր փետրուարի 25-ից զրած պատուական նամակի բովանդակութիւնն շտապեցի հաղորդելու Սուրբ Հօրն այսինքն պապին: այդ մեծ գործակալութիւն պատճենեց նորին Սըրբութեան: աս շկարողացաւ իր հրացմունքը չշայմնել Փըրանիսից կաթոլիկների առատանընութեան վայր: որոնք նոր հրաւիրից յանոց, քալատուն օրուայ կարճ միջոցում 82,100 ֆրանկ: (Ծ. Խմբ. այժմ 120, 100 ֆր.) նշանաւոր գումարը ստորագրուցան յօգութիւն հայ ազգի:

Ոչ որի ակայսի մն մեծափառ քանանյապետի արդէն և այժմ իսկ գործ զրած շանքերն այդ հալածուած ժողովով վեճակը բարուցաւու համար, ոչ էլ այս օժանդակութիւնները, որ քանից հացընել է նրանց: Վերջին կոսմիստորիայի ժամանակ ծիրանաւորներին ուղղեալ ծառի մէջ առկին մի հանդիսաւոր վկասութիւն տուաւ այս կաթեցութեան, որ ունի դէպի նոցա:

Այս իսկ պատճաններով պէտք է գովել Զեր վերապատութեան նախանձը, որով զուր միհենոյն նպատակի համար աշխատում էք:

Բաց յայմանէ նորա ցանկութիւնն է, որ նոր Փառասիացիներին ուղած հրաւիրների նման այլ հրաւիրներ եւս ուղղուն ուրիշ ազգերի: եւ նա վստա՞ս է, որ այդ երկուների կաթոլիկները իրենց առատանընութեամբ պիտի մըցնեն Փառասիացոց հնու:

Այս յուսով նա ի նշան իր հայրական պիրոյ, ուղարկում է ծնզ ի սրտի իր առաքելական օրնութիւնը, ինչպէս եւ ըլլոր այն անձանց, որոնք մի այդպիսի սուրբ գործի զարուի են կանգնած, ինչպէս եւ ըլլոր հաւատացեաններին, որոնք այլ նպատակով նուիրաբերութիւններ են արել ու կամ պիտի անեն:

Ընդունեցէք, բաց աստի, իմ շորժաւորութիւններս այն առատութեան համար, որով 8էրն օրնել է մեր ծննդարտիք 4. 1890.

Ա. Ժ. Ժանդանակութեան մասին յայտնի է հայ

ընթերցողներին հայ կամուլիկների պատրիարք գերապայծառ Ազգաբեանի բանած ընթացքը: Մինչդեռ

Քրանսիացի կրօնաւորը առանց հաւատափոխութեան մասին խօսք անելու եղայրութեան անունով հանգանակութիւն է սկսում: Մինչ Հռովմի քահանայափետք օրհնում է այդ ձեռնարկը առանց ակնկալութիւններ ցցց տալու, հայ Ազարեանը կաթոլիկների նուերներն առատացնելու նպատակով նըրանց հաւատորսութիւն է խոստանում: ահաւասիկ մի մարդ, որի մասին կարելի է տաել ուսուած royaliste զե լու! բայց զարմանալու բան չկայ, այդ է ծառայածինների բարբար. հայկական կերպում այդպիսի օրինակներ շատ են եղել և կան ցայսօր, այդ է սորութեան մէջ ապրանքների սովորութիւնը:

Քաղաքական թերթերն հաւատացնում են, որ վերջին ժամանակներու պապի և սուլթանի յարաբերութիւնները վատացել են իրեւ թէ հայոց պատճառով: Ազարեանի շարեկամները ճարպիկ են պատպիսի լուրերը տառածելու մէջ, նրանք հաւատացնում են մէջ Թիֆլիսի հայ թերթերից մէկի միջոցով, որ Ազարեանը սուլթանի աչքից ընկել է տառապեալ հայերի դատը պաշտպանելով և այն աստիճանի ծանրացել է այդ խնդիրը, որ սուլթանը պատպից պահանջել է Ազարեանին հեռացնել և. Պոլից:

Այ պապի և սուլթանի յարաբերութիւնները շատ բարեկամական են: ցցց է տալիս այն միջնորդութիւնը, որ վերջին օրերս սուլթանն արել է և պապն ընդունել: Խնչպէս լրագիրներն հաղորդեցին, Բոլղարից բանադրուած Ֆերդինանդ իշխանի համար սուլթանը խնդրել է պապից զատկի տօներին հաղորդուելու թոյլտուութիւն և սուլթանի միջնորդութիւն յարգուել է: Կարուած յարաբերութեանց ժամանակ այսօպիսի միջնորդութիւնը ոչ լինում են և ոչ ընդունուում: Խնչ վերաբերում է Ազարեանի ազգային խնդրին զոհ լինելուն: զրան ոչ ոք կարող չէ հաւատալ, քանի որ մեր աչքի տառաջ է նրա տիրահռչակ հեռագիրը և. Շարմէտանին: Գուցէ Ազարեանը սուլթանի աչքից ընկած լինի հէնց այն պատճառով որ չափազանց եռանդ է ցցց տուել հայերին կաթոլիկ դարձնելու մէջ, որովհետեւ սուլթանին լաւ յայտնի է՝ թէ ի՞նչ պարտաւորութիւններ ունի դէպի իւր կաթոլիկ հպատակները: որոնց պաշտօնական պաշտպանը Թիւրքիայում Քրանսիան է:

— Քրանսիայի կաթոլիկները մտադիր են այս տարի մեծ հանգիստ առնելու քրանիների քրիստոնեայ մկրտուելու տարեդարձը: Այժմեան արմատական կառավարութիւնը շատ հակառակ է այդ տօնամբութեան և միջոցներ է հնարում խափանելու Բայամի մէջ կատարելիք մեծ հանգիսը:

— Արքիթէն ամէնքի ուշադրութիւնը գրաւել է, ամրող Խերոպան այժմ ափիկեան խնդիր-

ներօվ է զրադուած, ուստի և պարբերական հրատարակութիւնների մէջ ամենայն օր նորանոր տեղեկութիւններ են լոյս տեսնում ու աշխարհի մասնիւ: Քրանսիացի յայտնի զրագէտ Ժիւլ Սիմոնը նկրագրում է իւր մի խօսակցութիւնը կաթոլիկ միսիսինար հ. Ալլէրի հետ, որ տասն տարիի ի վեր քարողում է Ասդոյի Աւրանդի վայրում: Քարողչի տուած տեղիկութիւններից երեսում է, որ Ասդոյի այդ մասում վայրենի մարգակերներ են բնակուում: Քրիստոնեայ առավելութիւնն այդ տեղերում մեծ գործ կարող է կատարել, եթէ Կիթական միջացներ ունենայ: և. Ալլէրը պատմում է, որ ինքն ու իւր ընկերները լիմիկների հետ լաւ յարաբերութեան մէջ են, քարողիչներին գիմում են իրեւ բժիշկների, երբեմն էլ պաշար չունենալուց ստիպուած քարողիչներին են գիմում և ուսելիք ստանում: զրա վիստարագոյց են անում այն տեղերը, ուր իրենց ցեղակիցները մանուկների հօր և եր են պահուած: Աւրանդուցիք շատ են սիրում մարգու, նրանք նաշակով այր մարգկանց մին աւելի համեղ է քան կանանցը, առանձնապէս սակայն համեղ է համարուաւմ մանկանց միտը, որոնց նրանք գողանում են և ոչխարների պէս պահում են ուսելու համար:

Ամեղոլիկ քարողիչները գնում կամ գործնում են այս երեխոյց և գաստիարակում քրիստոնէական հաւատութիւնը:

և. Ալլէրն արգէն իւր գործն աւարտած վերադառնալու վրայ էր, երբ Փ. Սիմոնին է հանդիպում: որ վերադիշեալ տեղեկութիւններից յանց հարցնում է՝ թէ արգեօք յաջող է եղել իւր հանգանակութիւնը:

Ես հետո տանում եմ քիչ արծաթ, մի քանի իրեր, գեղեր, գործիք և պաշարեղէն, բայց ես մի ցանկութիւն ունեի: որին չհասայ. ես կամենում էի երկու հրացան տանել, որոնցով մենք թէ որս կանենք և շատ պաշար կունենայիք և թէ բնիկների հետ յաջողութեամբ կը կառենիք երեխայք իւրեխայք իւրեխու համար:

Ժիւլ Սիմոնն հարցնում է իւր յօդուածի վերջը.

«Արգեօք մեր տէրութեան զինանոցներում կամ մեր որսորդների մօտ չի գտնուիլ երկու հրացան առաքելական քարողիչների համար»:

— Կաթոլիկ եկեղեցու անդրանիկ ի գլաւ տերը: այսինքն Քրանսիական եկեղեցուն մի մեծ հարուած է սպասում արմատական կառավարութեան կողմից, 1985 թ. վետարուարի 9-ին Գորլէն մի նոր օրենքի ծրագիր է առաջարկել աղջային ժո-

զովին Այդ օրէնքը վերաբերում է Հնկերակցութիւններին։ Գրա յօդ. Յում ասուած է Հնկերաւթիւնները (միարանութիւնները) կարող են բացի իրենց անդամների սեփականութեան մուտքից միայն տարեկան անդամնեցութեան վճարներն ունենալ, Դրանք չեն կարող ոչ իրենց անունով և ոչ էլ մըջնորդների անունով անշարժ կամ շարժական սեփականութիւն ձեռք բերել, ոչ կտակներ և նույնենք ընդունել և ոչ էլ մասնակից լինել որևէ առևտրական ձեռնարկութեան։ Խմէ այս օրէնքն կարողութիւնը կանցնի աերութեան գանձարանին։

ՀՆ ԿՍԹՈՂԱԿԱՆԾՐԻ ՆԽԵՎՃԻ

Մարտի 16-ին Գերմանիոյ Բռնն քաղաքում ժողովուած հին կամպոլիների նույիրանները ընտրեցին իրենց եկեղեցու պետ փոխանակ գանձանուած Թայնիէնս եպիսկոպոսի փիլանորդ Ա. Ի. Բ. բ. բ. ի. Ա. Պ. ընտրութիւնն արդէն նախագուշակուած էր, օրովհետու հանգուցեալ Բայնիէնսը Ա. երերին անցեալ տարի ինքն էր ընտրել իրեն օգնական Թէոլոգ Հոգեքրա Ա. երերը ծնուել է 1836 թուին և բարձրագոյն ուսումն է ստացել Միւլենի և Բռննի համալսարաններում՝ ևս սկզբում յայտնի եղաւ իրու փիլիսոփայց իսկ Ա. ատիկանի ժողովից յետոյ միանալով բողոքոց հոգևորականների հետ գարձաւ հին կաթոլիների նշանաւոր վարդապետներից Ա. կը, երկար ժամանակ ուսուցչապետ էր Բրեսլավի համալսարանում և միանգամայն հօգիւ հին կաթոլիկ եկեղեցու այժմ կոչուած է այդ նորարարուղ եկեղեցու ընդհանուր հոգուապետութեան։

ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

ՏԻՒԶԵՐՈՎԱՆ, ՊԱՏՏԻՎԱՐՔՈՒԹԻՒՆ.

Քոլղարիոյ Գերգինանք իշխանը, որ մի անբացատրելի ընթացքով չէր հաճել Կ. Պոլսի հայոց պատրիարքի ուղարկած պատգամաւորին ընդունել, այցելութիւն է զնացել տիեզերական պատրիարքին։ Այդ այցելութեան հետ կապում են քոլղարական էկզարքուութեան Կ. Պոլսի Սոփիա տեղափոխելու ինդիրը, Եւրոպական մասնաւորապէս աւստրիական և անգլիական մամուլը հոչակեց, որ իշխանը համաձայնութիւն է տուել քոլղարական էկզարքուի Սոփիա տեղափոխուելուն։ Այս համաձայնութեան գէմ մեծ աղմուկ գուրս եկաւ Քոլղարիայում ուր բոլոր կառավարութեան հակառակ մամուլը միաձայն բողքեց զրա գէմ և ցոյցեր էր պատրաստում արդէն, երբ նախարարութեան բերան «Միր» լրագիրը յայտարարեց, որ այդպիսի ծրագիր չկայ։ Քոլղար էկզարքուութեան Սոփիա տեղափոխուելով քոլղարները պիտի հրաժարուեն Մակեդոնիայից, ուրի մեծ քաղմութեամբ բոլղարներ են ապրում և որի վրայ ուղղուած են բոլղար հայրենասէրների հայեացք բ-

Տիեզերական պատրիարքութեան համար շատ ցանկալի է բոլղար էկզարքոսի հեռանալը Կ. Պոլսից, որովհետև այդու Մակեդոնիան իւր իշխանութեան կենթարկուի, ուր կարելի էլ լինի յունական շահները պաշտպանել։

— Տիեզերական պատրիարքութեան պապի միութեան կոնդակի գէմ հրատարակած պատասխանին այժմ մի կիսապաշտօնական պատասխան է տուել «Civilita cattolica» թերթը, որ ներշնչուած է Վատիկանից և մեծ ընդունելութիւն է գտել կաթոլիկ աշխարհում։

ԲՈՂԱՐԺՈՒԱՆ ՆԽԵՎՃԻ

Քոլղարիայում երկար տարի ուսուցչութիւն արած մի հունգարացի, Վագնէր անունով՝ Նկարագրելով այդ երկրի ներքին վիճակը, խօսում է և գիւղական եկեղեց ական եկեղեց ական երի մասսին։ Քողարիայում գիւղական քահանայից կրթութիւնը, վիճակն ու դիբը շաա աննախանձելի է։ Գեռ ևս տաճկաց արհապետութեան օրերում յայն եղիսկոպոսները անխտիր ձեռնապրում էին լաւ վարձատրութիւն տուողներին, մինչև անգամ եթէ դրանք հասարակ գիւղացիք լինէին։ Երիթք էր եթէ դրանք ձեսերն ու արարողութիւնները գիտենային և անգիր իմանային կարեւոր աղօթքները, Պատահաւմ է որ այդ քահանայք եկեղեցում աղօթքն ասում են գիրքը զլիիվայր բռնած։ Երբ նրանց ուշագրութիւններն են հրաւիրում այդ բանի վրայ, նրանք արդարանում են, որ երեխ տանը երեխայքն են շուռ տուել նշանացի զրուած գրքի գիրքը։ Գիւղական քահանայից եկամուտն այնքան քիչ է, որ նրանք ստիպուած են երկրագործութիւնն անելու միւս գիւղացոց պէս, որ ապրին։ Զարմանալի չէ, որ այդպիսի հանգամանքներում կաթոլիկ քարողիչները մեծամեծ յաջողութիւններ էին ունենաւում ցարդ։

ՈՐՈՌՈՒՑ ՆԽԵՎՃԻ

— Փետրուարի 14-ին Կայսերական հաստատութիւն ստացաւ պետական խորհրդի նոր առաջարկած օրէնքը ոչ քրիստոնեաց առ առ առ առ առ գ մ ա ս ի ն, ո ր ո ն ք ա ր գ ե լ ք կ ը լ ի ն ի ն ք ր ի ս տ ո ն ե ա ն ե ր ի ն կ ա տ ա ր ե լ ի ր ե ն ց կ ր օ ն ա կ ա ն պ ա ր տ ա կ ա ն ո ւ թ ի ւ ն ե ր ը։

Հաշտարար գատաւորներն այսուշետև պատասխանաւութեան պիտի ենթակեն այն ոչ քրիստոնեաներին, որոնք իրենց ծառայ վարձկան և կամ աշակերտ քրիստոնեաներին կարգելեն կիւրակէն և եկեղեցական տները սուրբ պահնուու և կամ իրենց քրիստոնեական պարտիքը կատարելու։ Այսպիսի գիպուածներում տալիք պատիքն է դրամական տուգանք ոչ աւելի յիսուն ուուրբուց։

— Կրթուածած գասակարգի մէջ զարթնած կրօնական հետաքրքրութեան յագուրգ տալու համար ռուսաց մի քանի քաղաքներում, որ հոգեօր գրպրցներ կան, գասախօսութիւններ են տեղի ունենում կրօնական ուղղութեամբ, Այդպիսի գասախօսութիւններ կարգացուել են վերջերս Ստաւրապուռ և Տորոսիկում:

— Մարտի 12-ին կրթութեան պաշտօնեւթիւնը հաստատել է Պետերուրգի և Ռուկուայի գրադիտութեան ընկերութիւն եւ բարձր ուղղութեան մէջ եւ բարձր ուղղութեան եւ բարձր ուղղութեան նպատակն է ժողովրդական սկզբնական կրթութեան գործին նպաստել:

— Մամուլի առանձին ուշադրութիւնն է գըրաւել Առոնէժի նահանգապետի մի հրամանը, որ ուղղած է իրեն ստորագրեալ բոլոր վարչութիւններին. այդ հրամանագիրն արձակուել է մեծ պասի առաջին շաբաթին և պատուիրում է հսկել և իրեն իմաց տալ, թէ ովարդեալ ծառայողներից տարին գոնէ միանգամ չէ հաղորդուում Այս եկեղեցական խնդրի սոտիկանական ճանապարհով կարգադրելու դէմ լուելեայն բողոքել են ազնուականների նահանգական և գաւառական ժողովներն, իսկ եկեղեցական թերթերը ցաւելով են արձանագրում այս փաստը, իրեն ապացոյց եկեղեցականների անպարտաձնաչութեան:

— Միստիկներուկոյէ օրողքէնիէ թերթը բողոքում է ռուս կրթուած գասակարգի այն անգամների գէմ: որոնք աղատակամ քարոզիչներ են հանգիսանում աղանդաւորների մէջ և նպաստում են աղանդների տարածուելուն, մանաւանդ Տու ստագչէ ին այի (տոլստոյականութեան): Ազատամիտ ռուսներն այս քարոզութիւնը կատարում են իրեր և սովորական ուխտաւորներ, բանուորներ, մշակներ և երկրագործներ, Կրթուած, համալսարանական երիտասարդներ սովորական ուխտաւորների կամ մշակի զգեստով մօտենում են հասարակ ժողովրդին, ապրում են և գործում նրանց մէջ և յափշտակում նրանց սիրտն իրենց քարոզած վարդապետութիւնների համար, Այս առթիւ ևս ուղղափառութեան նախաձամներին դիմում են աշխարհական վարչութեան օգնութեան և խիստ հսկողութիւն են պահանջում այդպիսի քարոզիչների վրայ:

— Եկեղեցական և գաւառական մամուլը վրդութեած է այն լուրերի առթիւ, որ տարածուել են չոդեսոր գոյցների ծրագիրները սահմանափակներում դիմում աշխարհային գիտութիւնները աշխարհակելու և հոգեօր առարկաները գորացնելու, Այս ծրագրի գէմ առար-

կուում է, որ հանրակրթական գիտութիւնների կարիքը շատ մեծ է եկեղեցականների համար, ուստի դրանց չափը պիտի աւելի և ընդլայնել և ոչ թէ պակասացնել:

— Մատագրութիւն կայ ուստի սեմինարներում հին լեզուների փոխանակ բժշկութիւն աւանդելու, որի գասընթացքը երկու տարի պիտի տեսէ, Համալսարաններում բժշկութիւնն հաղի հինգ տարուան մէջ են ուստի ուղարկում: Ի՞նչքան բժշկութիւն պիտի արդեօք սեմինարիստները երկու տարուան:

— Հրատարակուած է և արգէն իսկ հեռագրով ամենուրեք հաղորդուած ս. Թագաղբութեան հանդիսի ամբողջ օրակարգը, որից իմանում ենք, որ այդ մեծափառ հանդէսը պիտի աեղի ունենայ մայիսի 14-ին:

ԱՆԳԼԻԱՆ ԾԽՆԴՅԵՑԻ.

Անգլիական եկեղեցական թերթերը տպագրելով լորդ եպիսկոպոս Ա. Ելիկնսընի Առուսաստանում գտած ընդունելութեան նկարագիրը, յայտնի ուրախութիւն են ցոյց տալիս այդ առթիւ: Այս ուրախութեան պատճառն այն է որ անգլիկան եպիսկոպոսութիւնը չէ ճանաչուում կաթոլիկներից, մինչդեռ ռուս աստուածարանները տրամադրութիւն են ցոյց տալիս առաքելական համարելու անգլիկան եպիսկոպոսութիւնը: Ակեղեցական տարեգրութեան մէջ 1895—96 թուականները նշանաւոր են այս անսակէտում, որովհետեւ անգլիկան և օրթոդոքս եկեղեցների մէջ յարաբերութիւններ սկսուեցան, որոնց մասին առաջ երազել անգամ չէր կարելի, որովհետեւ անգլիկան եկեղեցականները օրթոդոքսութիւնը գրեթէ կապաշտութիւն էին համարում: այժմ փոխադարձ ձգտումն կայ իրար ճանաչելու:

— Յերկուովնից Ա. Աստանիկը իւր Տ 11-ի մէջ վկայում է, որ անգլիկան ազգի մէջ վառ է եղել միշտ և է կրօնական կեանքը: Ըստ հիւ անգլիական աղջիկան այս կրօնասիրութեան այնտեղ միշտ հետաքրքը բութեամբ են հետեւում քրիստոնէութեան վիճակին այլ երկրներում: Յայտնի է, ասում է Պետրովուրգի ակադեմիայի բերանը, որ սուտ և քաղաքական նպատակով տարածուած լուրերի պատճառուի: որ իրեր թէ Ուուսիայում հալածում է քրիստոնէուն էութիւնը (գերազարար այսպիսի անհեթեթութեանց տարածումներից հանգիսանում է այժմ կում և. Տոլստոյը, որ վերջերս այդ իմաստով մի վրդովեցուցիչ յօդուած է հրատարակել մի անգլիական ամսագրում: որից աղա թարգմանուել է գերմաներէն և այլ լեզուներով): Անգլիայում կազմուեցան

«Ընդգույքում՝ կազմուել է մի առանձին յանձնաժողով, որ դիմումն է արել բոլոր քրիստոնէից՝ առանց դաւանութեան խարսութեան, կոչելով՝ Կրտսեալ աշխաթքի հայոց Համար։ Եյօն Նպատակով կազմուած է նոյն իսկ մի յատուկ աղօթք, որ թարգմանուած է բալրու Նշանաւոր Եւրոպական Լեզուներով և ուղարկուած բոլոր Եկեղեցների և Համայնքների նշանաւոր Ներկայացոցիշներին։ (Չ. Այս աղօթքի բնադիրը Հաղորդաւել է և մեր (Ա. Բ.) Խմբագրութեան մի բարձրաստիճան Եկեղեցականի ձեռքով)։ Խուս օրթոգրափ Եկեղեցին Հարկաւ երբէք չէ մերժել և չի մերժի աղօթքել տառապելոց մասին, ննչպէս և իրապէս անում էլ է ամենայն օր։ Այս գիպուածում տական մի բաւական տարօրինակութիւն կայ, և նզգիացիք իրրել թէ չեն յիշում կամ չգիտեն, որ իրենք էին հենց կամ սասց ասելով իրենց քաղաքական առաջնորդները, որ խանքարեցին օրթոգրափ Խուսիային, որ քիչ արիւն չէ թափել արևելեան քրիստոնէից, ուստի և Հայոց Համար, իրագործելու Սան-Ստեֆանոյի գանձագիրը, որ կատարելապէս արգիւնաբեր կը լինէր Հայոց Համար և կարող էր բոլորովին ազահովել նրանց այժմ կատարուող գաղանութիւններից։ Եյօպիսով նթէ անզիհացիք որ և է բանի մասին պէտք է աղօթեն, այդ այն է, որ Տէր Աստուած լուսաւորէ նրանց քաղաքական գործիշների միտքը քրիստոնեայ աշխարհի շահէրն հասկանալու և նրանց սրտի մէջ զնէ այն գիտակցութիւնը, թէ ո՞րքան խանգաւոր է ևս ասկան քաղաքականութեան Համար քանդել մեծ ազատման գործի արգամիքը։ Ամէն աղջ ունի այժմ առ Աստուած աղօթելու խնդիրը, իսկ ի՞նչ անէ արգելօք խեղճ Հայ աղքը, որի ողորմելի մնացորդներին աղօթքելու իրաւունք անզամ չեն տայիս։

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ-ՊԱՏՄԱԿԱՆ

9200110

Մի նոր, հրաշալի կեանքով շոնէ առած  
Ժպտում է թուժին, զերդ մանուկ չընառ.  
Եւ նոր գօրուժեամբ երկին է զայթած,  
Եւ երկինքն յուսակ ու գեղածիծաղ:

Այս խորհրդաւոր պահովն ես մինակ  
ծնկաշոր ահա քեզ եմ աղօթում  
Խաչեցիալ Փրկիչ, քո հովանու տակ  
Յաստանջ սրտիս իղձերն եմ քերում:

Թողարկության զարման չերմ՝ արեւ  
իմ հայրենի տան վերայ էլ փայլի.  
Մի օր, գեթ մի օր թող քո առաջեւ  
Այստեղ հեք ծիծուան օրհներզը լուի,

Թէ անցաւ եւ մեր ձմեռ ցրտաշունչ,  
Թէ անպալտ արինն հասցըց վարդեր,  
Եւ տառապելոց ողբերն ու տրտոնց  
Դարձան գոհութեան խաղաղ մաղթանքներ:

